ՀԵանի Նախագահութեամբ։ Հանդիսին մասնակցել են մօտ 200 հայեր և ամերիկացիներ, ուր տեղի են ունեցել բազմաթիւ ատենախօսութիւններ։ Ամերիկեան հայ գաղութը մատուցել է շնորհալի օրիորդին՝ նորա իւղաներկ մի գեղեցիկ պատկեր։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կ. Պոլսից մեզ գրում են հետեւեալը.

Այս օրերս Սանասարեան վարժարանի հրատարակութեամբ լոյս տեսաւ նոյն վարժարանի քսանամեայ տեղեկագիրը 1881—1901, որ պարունակում է իւր մէջ վարժարանի հիմնադիր Մկրտիչ Սանասարեանի և վարժարանի լուսատիպ պատկերները և կենսագրական ծանօթութիւններ։ Տեղեկագրից իմանում ենք, որ Սանասարեան վարժարանի առաջին ընթացաւարտներն եղած են 1891 թուին, իսկ մինչև 1901 թիւը, ունեցած է 110 շրջանաւարտներ, որոնցից 94-ը ուսումնական բաժնից, 4-ը ուսման և արհեստի և 12-ը արհեստագիտական բաժնից։ Այդ քսան տարում վարժարանի դրամագլխի եկամտից տրուած է ուսումնարանին 2,472,000 ղրշ (մօտ 210,000 ռուբլի), իսկ 1,100,666 ղրշ. ևս իբրև արտասովոր նպաստ (մօտ 93,000 ռուբլի), ընդամենը 303,000 ռուբլի։ Կտակատար վսեմ. Կ. Եկեանցի մօրաքոյրը 1893-ին կտակած է 10,925 ռուբլի, որի տոկոսը նոյնպէս գործ է ածւում վարժարանի վերայ։ Վարժարանը վերջերս գնել է ՍիրքէՀիի կողմը մի կալուած 19,000 ոսկւով (մօտ 170,000 ռուբլի), որ կոչւում է «Սանասարեան խան» (քարվանսարայ) և որ տարեկան մօտ 13000 ռուբլի եկամուտ է բերում. բացի սորանից գնել է նաև զանազան հողեր Կարնոյ մէջ։ Վարժարանի դրամագլխի 10% յատկացուած է Սանասարեանի ընթացաւարտներից ուսուցիչներ պատրաստելու Եւրոպայում։ Վարժարանը 20 տարում մուտք է ունեցել 7,131,701 ղրուշ (մօտ 642,000 ռուբլի)։ 1900—901 շրջանի աշակերտաց թիւն էր 193. առհասարակ աշակերտների թիւը 200-ից աւելի չէ եղած և ոչ 75-ից պակաս։ Գրիգոր խան Շամտանճեանը տարեկան մօտ 200 ռուբլի է նուիրել 5 տարի շարունակ Հայ լեզուի մասնագէտ ուսուցիչ պատրաստելու վարժարանում պաշտօնավարելու նպատակով։

ՆԱՄԱԿ ՎԵՆՆԷՑԻՑ

10 օգոստոս 1904

Եւրոպայում այս տարի ընդհանրապէս սաստիկ չորային է, անձրեւների երկարատև բացակայութեան պատճառով։ Ուս-